



# ԿՈՐՍՎԱԾ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅՈՒՆ

արու  
զավակի  
Նախընտրությունը  
Հայաստանում

Գրիգոր  
ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ



“ 2

«Հնազանդ եմ», «Տեր եմ»

Տղամարդ ու տեսակետ.



Այս բառերն են արտասանում բոլոր հայ զույգերը, որոնց ամուսնությունը կնքվում է եկեղեցում: Աղջիկն ասում է՝ «հնազանդ եմ», տղան՝ «տեր եմ»: Նույն բառերը զույգերն արտասանում են մտքում, երբ նրանց ամուսնությունը կնքվում է պետության կողմից: Որովհետև դա է պահանջում ավանդապաշտ մեր հասարակությունը:

Մենք այնքան ենք կարևորում ավանդապաշտությունն ու ծանոթների և հարևանների կարծիքը, որ հնազանդության իմիտացիան պահպանվում է նույնիսկ այն ընտանիքներում, որտեղ այդ երևույթը չկա:

Աղջիկներ կան, որոնց այդպիսի դրվածքը դուր է գալիս: Նրանք կամ իրոք հնազանդ են լինում, կամ էլ ձևանում են, թե հնազանդ են՝ իրենց ամուսիններից պահանջելով «տեր լինել»: Այսինքն, ըստ նրանց, դառնալ հայթայթող և վաստակող կատարելով այն դերը, որն ուներ տղամարդը «նախնադարյան»

հասարակությունում: Այդ աղջիկները չեն գնում հոսանքին հակառակ, այլ ընդունում են հասարակության կողմից պարտադրված խաղի կանոնները:

Այսօր, սակայն, հայտնվել են այնպիսի հայ աղջիկներ, որոնք չեն ցանկանում նույնիսկ ձևականորեն լինել հնազանդ: Առավել ևս, որ վերջին 20 տարիներից կյանքն այնպես է փոխվել, որ տղամարդկանցից շատերը գրկվել են հայթայթող-վաստակող լինելու հնարավորությունից, և այդ դերը, մեծամասամբ, փոխանցվել է կանանց:

Այդ հանգամանքը շփոթեցրել է հայ տղամարդկանց: Այն աստիճանի, որ գրանցվել են նույնիսկ ինքնասպանության դեպքեր:

ԽՍՀՄ փլուզումից հետո կանայք նույնպես շփոթված էին, բայց բնությունն օժտել է նրանց ավելի կայուն հատկանիշներով: Չէ՞ որ նրանք են, որ պետք է ապահովեն սերունդների շարունակելիությունը: Եվ կանայք սովորեցին իրականացնել այն գործառույթը, որը դարերով վերապահված էր տղամարդկանց:

Վերջիններիս մեր իշխանությունները թողել են գերազանցա-

պես շինարարի, տաքսիի վարորդի և պետի դերերը: Ուր գնում ես, բացի նշված ոլորտներից ու բանակից, ամենուրեք կանայք, հիմնականում ջանել աղջիկներ են աշխատում, որոնց պետերը տղամարդիկ են: Եվ այդ հանգամանքը, ինչպես նաև այն, որ կանանց թվաքանակը Հայաստանում շատ ավելին է, քան տղամարդկանցը, փոխել է ոչ միայն սեռի մտածելակերպն ու դերը, այլև, նույնիսկ, արտաքինը:



Այսօրվա հայ տղամարդկանցից շատերը դադարել են հետևել իրենց: Նրանց ոչ իրենց ար տաքինն է հետաքրքրում, ոչ էլ ֆիզիկական վիճակը՝ շատ քչերն են սպորտով զբաղվում, կամ, գոնե, մար զանք անում: Նյութապես ապահովվածների շրջանում առա ջացել է մուլտիսկ տղամար դու մոր տեսակ՝ բույթ հայացքով, հաստավիզ, տձև մարմնով:

Աղջիկները, ընդհակառա կը, ոչ միայն աչքի են ընկնում ուսումնատեմնությամբ, այլև սկսել են մեծ ուշադ րություն դարձնել իրենց արտաքինին: Ի տար բերություն տղամարդկանց մեծամասնությանը՝ մեր աղ ջիկները խստորեն հետևում են իրենց ար տաքինին. սպորտով են

զբաղվում, պարում են, դիետա են պահում, հետևում են մորաձևությանը, հաճախում են գեղեցկության սրահներ:

Դարեր շարունակ հայերն ապրել են մահմեդականների լծի տակ, ենթար կվել են մրանց օրենքներին, ընդօրինակել մրանց բարքերը: Դա, ինչպես մաս մահապետական մտածելակերպը, դեռ ուժեղ ազդեցություն ունեն: Այդ պատճառով է, որ տղամարդկանց մեծամասնությունը, գոնե հոգու խորքում, կանանց չի համարում իրեն հավասար: Աղջիկներին մրանք վերաբերվում են սիրով ու քնքշանքով, բայց այնպես, ինչպես որ կվերաբերվեին շատ սիրելի ընտանի կեմդանիներին: Իսկ որոշներն էլ այնքան անհավասար վերաբերմունք ունեն իրենց որդիների և դուստրերի հանդեպ, որ վերջինների զավակներին համարում են երկրորդ կար գի թոռներ, առա ջ-



նահերթությունը տալով որդիներին ու նրանց զավակներին: Եվ դա լինում է նույնիսկ այն դեպքում, երբ դուստրերը շատ ավելի խելացի, սիրող ու նվիրված են լինում իրենց հայրերին, քան որդիները: Ավելին՝ լինում է նույնիսկ այն ժամանակ, երբ որդիները միայն տհաճություններ ու դժվարություններ են բերում:

Եվ հիմա բանը հասել է նրան, որ որոշ տղամար դիկ, օգտվելով իրենց կանանց հնազանդությունից, սկսել են պարտադրել նրանց կատարել սր հետապահված վիժեցումներ, երբ տեղեկանում են, որ ապագա երեխան աղջիկ է լինելու: Այսինքն՝ դրժում են իրենց՝ «տեր լինելու» խոստումը և նպաստում նրան, որ հետագայում հայերի մեջ առաջանա ազգային նոր ավանդույթ՝ մահմեդական ղալիմը՝ հարսնացուի համար գլխագին վճարելը:



# Ման ՊԱՊՅԱՆ

Արդեն երկու աղջիկ ուներ, և  
երրորդ աղջիկն անհրաժեշտ չէր...  
Դու չեղար ոչինչ,  
Գուցե լինեիր իմ ուզած բալիկ,  
Լինեիր շեկլիկ, սպիտակ կամ թմբլիկ...  
Ներիր, իմ բալիկ, մերիր, որ չեղար,  
Որ չթողեցի լինես, իմ բալիկ,  
Իմ անմեղ փոքրիկ,  
Որի մեղքը տկ... աղջնակ լինելն էր  
Ներիր ինձ, մերիր:

Արդեն երկու աղջիկ ուներ,  
և երրորդն անհրաժեշտ  
չէր...

“ 6

«**Դ**ա հեշտ վճիռ չէր», - նույն-  
ճիսկ այսօր՝ 16 տարի  
հետո, Գայանեն մի պահ ընկճվում  
է՝ հիշելով 1996 թվականի հուլիսի  
15-ը:

Արդեն գիտեր, որ իր սրտի հետ  
միասին տրոփում է մեկ այլ սիրտ,  
պարզապես աղջկա: Արդեն երկու  
աղջիկ ուներ, և երրորդ աղջիկն ան-  
հրաժեշտ չէր:

Հինգ բժշկի մոտ էին գնացել, բո-  
լորն ասել էին՝ աղջիկ է, և բոլորն  
ասում էին՝ հանկարծ չընդհատես:  
Անգամ ամուսինը, ով երկար տա-  
րիներ երազում էր որդի ունենալ,  
ընկրկեց. «Աստված այսպես է կա-  
մեցել, մեզ սա է տվել, ուրեմն...»

«Բայց ես արդեն որոշել էի, մա-  
նավանդ շատ վտանգավոր էր  
ձգձգումը, արդեն 4 ամսական էր  
աղջիկս...»

Մեկ ժամից պետք է գնայինք  
հիվանդանոց, տանն էի: Անգամ  
չէի ցանկանում հաց ուտել, կարծես  
խաբում էի երեխային, կերակրում  
էի, որ հետո տանեն... սպանելու:  
Նստած գրկել էի որովայն ու խո-  
սում էի մահացած սկեսրոջս նկարի  
հետ. «Դու որ լինեիր, ես մտնա բան  
չէի կարող անել: Տանում եմ, տա-

նում եմ՝ կտրտեն: Մեկը չկա, որ ինձ  
համոզի, ես մենակ քո դեմ չէի կա-  
րող բան ասել»:

Ու գնացին, սկզբում բժիշկը  
հրաժարվում էր, քանի որ ուշացրել  
էին, բայց վերջում համոզվեց:

«Երբ նարկոզից արթնանում  
էի, լսեցի, թե ինչպես են բժիշկնե-  
րը քննարկում՝ ինչ լավ բալա էր,  
բա թաթիկները... Մտածում էի, որ  
այլևս երեխա չեմ ունենա, քանի որ  
հանցանք եմ գործել: Չի կարելի, դա  
սխալ քայլ է»:

Չանցած երեք ամիս՝ Գայանեն  
հասկացավ, որ կրկին հղի է: Եվ երբ  
ցանկանում էր կրկին գնալ ստուգե-  
լու երեխայի սեռը, արդեն բոլորն էին  
դեմ, ստիպում էին անպայման պա-  
հել երեխային, թեկուզ աղջիկ լինի:

«Ես կտրականապես մերժեցի  
այդ միտքն անգամ. մեղք էի գործել  
նախորդի հանդեպ, ինչպես կարող  
էի աղջիկ ունենալ այդքանից հետո»:

Ստուգումները հաստատեցին.  
երեխան տղա է:

Գայանեն համոզված է. պետք է  
հնարավորություն տրվի՝ ծնողնե-  
րին ստուգելու երեխայի սեռը մինչև  
ծննդաբերելը, եթե նրանք ցանկա-  
նում են. «Եթե չլինեք սեռը ստու-  
գելու հնարավորություն, ես երբեք  
որդի չէի ունենա, իսկ մենք միշտ

ցանկացել ենք ունենալ երկու աղ-  
ջիկ և մեկ տղա»:

Նա խոստացել էր սկեսրայրին.  
տղա է ունենալու: Տղա թոռ ունե-  
նալը սկեսրայրի համար դարձել էր  
երազանք (յոթ աղջիկ թոռ ուներ):  
Այդ խոսակցությունից մեկ շաբաթ  
հետո սկեսրայրը անակնկալ մա-  
հացավ, և Գայանեն բարեկամների  
մոտ խոստացավ. սկեսրայրը կունե-  
նա տղա թոռ, թեկուզ հետմահու...

«Որդուս ծնունդը կյանքիս ամե-  
նաերջանիկ օրն է եղել, թեև մահ-  
վան դուռն էի հասել (ծննդաբերու-  
թյունից հետո բարդություններ են  
առաջացել): Ես կյանքին կառչած  
մարդ չեմ, և երբ ամբողջ գիշեր ար-  
նահոսում էի, մտածում էի, որ նպա-  
տակս իրագործել եմ, ամուսինս որ-  
դի ունի, թեկուզ իմ կյանքի գնով»:

**Գայանեի որդին արդեն 14 տա-  
րեկան է և կրում է մահացած պա-  
պիկի անունը:**



Հրապարակվել է 2011 թ. դեկտեմբերի 25-ին հեղինակի բլոգում

## Մայրանալու իրավունքը

“ 8

տրվել է  
արարելու, ոչ  
թե սպանելու  
համար...



Իմ սրտի տակ քո սրտիկն է զարկում,  
Ես քեզ սպասել եմ անբողջ իմ կյանքում...

**Ե**րգի տողերը մտքիս մեջ  
մտմտալով՝ գնում եմ թա-  
ղամասային համարութարան:  
Հղիության ան ջին ամիսներն են,  
ու ես հոգուս խորքում սպասում եմ  
որդու: Աղջնակս արդեն 8 տարե-  
կան է: Նա եղբայր է ուզում, ամու-  
սին՝ որդի: Իսկ ես, որ մեծ դժվա-  
րությունների գնով եմ մեծացրել  
առաջնեկիս, տարիներ շարունակ  
մտածում եմ՝ եթե երկրորդն ունե-  
նամ, ապա՝ միայն տղա:

Այլևս սպասել չեմ ուզում: Վեր-  
ջապես պետք է իմանամ սեռը:  
Մոնոգրաֆիայի կաբինետի մոտ  
հղիների ձգվող հերթը ստիպում է  
սպասել ամբողջ երկու ժամ: Հղինե-  
րի գրույցի հիմնական թեման երե-  
խայի սեռն է: «Առավոտից այստեղ  
ենք: Մի անգամ բժշկուհին նայեց,  
ասաց, որ մի ժամից գամ, գուցե տե-  
ղաշարժված լինի, ու սեռը երևա:  
Մի տղա ունեն: Ամուսինս ուզում  
է, որ երկրորդն էլ տղա ծնվի: Բայց  
ես աղջիկ եմ ուզում», - պատմում էր  
նրանցից մեկը: «Զէ, մա՛մ, թող տղա  
ծնվի, որ իրար հետ խաղանք», - մի-  
ջամտեց վերջինիս 8-10 տարեկան  
որդին:

«Ես արդեն գիտեմ, ինչ տղա է:  
Առաջինս աղջիկ էր: Նախապես  
չէիք ստուգել: Հետո երեք անգամ  
աբորտ եմ արել, որովհետև աղ-  
ջիկ էր ծնվելու: Բայց էս մեկը տղա  
է, հաստատ եմ ասել», - որովայնը  
գրկելով՝ հպարտացավ մյուս կինը:

«Մամ, էսօր կասեն, չէ՞, տղա  
ենք ունենալու՞, թե՞ աղջիկ», - թևիցս  
քաշելով շջնջաց աղջիկս: «Հա՛, բա-  
լես, երևի կասեն», - պատասխանե-  
ցի, իսկ սիրտս այնքան արագ էր  
զարկում...

Վերջապես մեր հերթն էլ հա-  
սավ: «Ամեն ինչ նորմալ է, պտուղը



Որո՞նք է զարգանում... »,- ասում է բժշկուհին: Իսկ ես սպասում եմ: «Բժշկուհի ջան, սեռը կարող եք ասել...»:

- Իսկ դու ի՞նչ ես ուզում ունենալ,- աղջնակիս է դիմում բժշկուհին:

- Ապերիկ:

- Չ'է, բալե՛ս, ապերիկ չէ, քուրիկ է:

- Բայց ես ապերիկ եմ ուզում:

Քուրիկը ես եմ:

Կաթինեացի մայր ու աղջիկ դուրս եկանք սիրո՞ւներս կախ: Գլխումս մի հարց էր պտտվում.

ի՞նչ անել, գուցե պետք է ընդհատել հղիությունը...

Տուն եկա: Պետք էր մի բան մտածել: Հարևանուհիս, ում հետ մոր պես մտերիմ էի, անմիջապես եկավ: «Հը, ի՞նչ կա»: «Աղջիկ է...»: «Բա ի՞նչ ես քիթոյ կախել: Կարևորը առողջ բալիկ լինի: Գիտե՞ս՝ քանի քանիսը կան, որ տղաներ ունեն, բայց օր ծերությանն իրենց պահողը էլի աղջիկներն են: Համկար ծջմտածես ընդհատելու մասին,- ասես մտքերս կարդալով՝ վրա-վրա խոսում էր հարևանուհիս,- ջախել ժամա-





Ասկ ես էլ քո մեան էի մտածում: Որդուց ու աղջկանիցս հետո հղիացել էի: Ծատ էի ուզում երրորդն ունենալ, իսկ ամուսինս դեմ էր. հանրակացարանում էինք ապրում, պայմաններ չուներինք: Չկարողացա ընդդիմանալ նրան: Ստիպողաբար գնացի արքայի: Ծատ ծանր տարա: Հիշում եմ՝ վերջում բժիշկն ասաց. «Ուզո՞ւմ եք իմանալ՝ ինչ սեռի էր»: Ասացի՝ «Չէ, բժի՛շկ ջան, պետք չի, մի՛ ասեք»: Ասաց. «Տղա էր, առողջ, հասուն...»: Սա վերջին բանն է, որ հիշում եմ: Ուշքի եկա մի քանի ժամ անց հիվանդասենյակում: Լալիս էի, մեղադրում ինքս ինձ ու ամուսնուս... Գիշերը երազումս այդ երեխան եկավ՝ կապույտ աչքերով, սպիտակ մաշկով... Դա իմ առաջին հանցագործությունն էր: Չկարողացա ինձ ներել ամբողջ կյանքում: Գրկում, համբուրում էի երեխաներիս ու զզվում ինքս ինձանից. ես ի՞նչ մայր եմ, ինչո՞վ էր սրանցից պակաս նա, այն մեկը...»:

Լսում էի ու հասկանում, որ ես չեմ կարող ապրել մեղքի գիտակցումով, որ չեմ կարող սպանել, որ ունենալու եմ՝ անկախ սեռից: Ու ծնվելու է փոքրիկս, որովհետև մայրանալու իրավունքը տրվել է արարելու, ոչ թե սպանելու համար ...



“ 12

Երեխան ապրի  
թե ոչ՝ որոշում է  
մայրը



Դեռ չէի հասցրել Գորիս-Երևան ճանապարհը հաղթահարելու մտքին հար մար վել, կողքին նստած երիտասարդ աղջիկը ձեռքն արագ բերանիս տանելով ու արմուկնիս խփելով, հասկացրեց, որ վարորդին ասեմ՝ արգելակի մեքենան: Սովոր տեսարան էր: Մի քանի րոպեից իմ օգնությունից հրաժարված աղջիկը կրկին մեքենայում էր: Քիչ սփրթնած էր, բայց ասաց, որ կարող եմ քարոնակել: Մեր քառյակը լրացնում էին տխուր առիթով մայրաքաղաք մեկնող տարեց ամուսիններ, որոնք համերաշխ ենթում էին: Միակ «խտուղը» Թաթևն էր: Աղջիկը հաճախ էր հեռախոսը ակամեջին տանում ու համարյա շշուկով խոսում: Զգում էի,

որ մի չհաղթահարվող անհանգստություն է նրան ուղեկցում: Գազալիցքավորման կետում իջանք: Մատախուղ էր ու գորիսյան մանրիկ անձրև էր տեղում: Մտանք փոքրիկ պրահ: Նրան էլ սուրճ առաջարկեցի: Հրաժար վեց: Նստեց իմ հարևանությամբ: Կրկին հեռախոսը զանգահարեց. «Չէ՛, ասում եմ՝ չէ՛, մերը ե՞ս եմ, չե՛մ ուզում, ասում եմ՝ գնալու եմ: Որ իմ ուզածով եղավ, վաղը հետ եմ գալու: Չվախենա: Այ՛ն կնիկ, հասկանո՞ւմ ես՝ էս դարում երեք աղջիկ... Դե լավ, պրծանք, է՛հ, երազն ինչ կապ ունի է, որ երազով լինի...»: Ես համարյա հասկացա՝ բանն ինչն է, բայց ինձ իրավունք չվերապահեցի հարց տալ: Ծարունակեցինք ճանապարհը: Քիչ անց ինքն անկեղծացավ ու պատմեց, որ երկու դպրոցահասակ աղջիկ ունի, որ հիմա հղի է, որ Գորիսում կասկածանքով տղա են ասել, բայց ինքը վստահ չէ, գնում է Երևան՝ ստուգվելու ու, որ աղջիկ եղավ, հենց Երևանում կընդհատի հղիությունն ու հետ կդառնա: Ասաց, որ վերջին զանգողը մայրն էր. մի վերջին անգամ խնդրում էր, որ այդպիսի բան չանի: Ասաց, որ սկեսուրն ու ամուսինն էլ դեմ էին իր որոշմանը, բայց տալն արդեն Երևանում ծանոթ

բժշկուհու հետ պայմանավորված ժամ ունի ու սպասում է...

Ես էլ ասացի, որ էս կյանքում ինձ համար ամենաանհասկանալի ու աններելի բանն այն է, երբ մայրը, սեռը հաշվի առնելով, ինքն իր ձեռքով գնում է, որ... Զգացի, որ դիրքորոշումս բավականին վնասեց նրա աչքին իմ՝ կյանքից բան հասկանալը: Հասկացա, որ անհիմաստ է խոսելը: Լռեցինք: Նա մինչև Երևան մի քանի անգամ էլ



իջավ մեքենայից ու սիրթնած հետ եկավ...

Երևանում առաջինը պիտի իջաներ: Որքան էլ համոզված էի՝ իզուր, բայց մի վերջին անգամ ասացի. «Դեռ ուշ չէ, լավ մտածիր, Անի»...

Ես նրան հաճախ էի հիշում, բայց, բնականաբար, ոչ մի լուր չուների. նա ինձ անծանոթ ընտանիքից էր:

...Վերջերս՝ այդ դեպքից տարիներ անց, ես Երևանից Գորիս էի գալիս: Վարորդը, հուրախություն ինձ, ասաց, որ երկար չենք սպասի, որ մյուս երեքը մի ընտանիքից են: «Ռոսիայի» մոտ սպասում էինք: Նրանք իջան տաքսուց. մի կին էր՝ երկու աղ ջկա հետ: Երիտասարդ աղ ջիկները շատ քնքշորեն օգնեցին ձեռնափայտով կնոջը: Տե-



“ “ 14





ղավորվեցին, ու ուղևորվեցին: Ճանապարհին դադար առա՞նք: Արփայի ասփին խմում էի դառը սուրճը: Նրանք երեքով առա՞նձին կողքի սեղանի շուրջն էին նստել: Ինչպես հասկացա՞ մայր ու աղ ջիկներ էին: «Վալերիանայի» հոտը մատնեց մոր վատ ինքնագզացողության մասին: Ես առա՞ ջար կեցի իմ օգնությունը. դեղերի պաշարով էի: Կինը հրածար վեց, ասաց, որ արդեն լավ է ու թույլ, նվաղած ժպտալով ասաց. «Դու ինձ չե՞ս հիշում, ես լավ եմ հիշում: Երանի...»: Ու նեղարտեց... Ես, նայելով նրա սև, երկար թարթիչներով կապույտ աչքերին, մտաբերեցի Անիին: Քիչ դադարից հետո նա հետ գնաց. «Հենց նույն օրը տալիս հետ գնացի բժշկի: Ասացին, որ աղ ջիկ է, ու հենց նույն օրն էլ... Գիտակցության եմ եկել մեկ շաբաթ անց... Գլուխս բարձրացնել չէի կարողանում: Երկու օր հետո հասկացա, որ քայլել էլ չեմ կարողանում: Երեք ամիս պառկեցի հիվանդանոցում: Ամուսինս ահա՞ լի ծախսերը հոգալու համար ար տա՞գնա աշխատանքի մեկնեց: Այդտեղից էլ սկսվեց իմ ընտանիքի քայ-

քայումը: Նա փող պար բերաբար ուղարկում է, բայց այնտեղ ընտանիք ունի, ասում են՝ զույգ տղաներ: Իսկ ես տարին մի քանի անգամ էս ճանապարհին եմ: Երեխեքս էլ հետս տանջվում են, մայրս էլ չկա: Ես չլսեցի նրան. Աստված պատժեց ինձ: Ես մորս միանունսր ն էի, ծնվել էի նրանց ամուսնության 15-րդ տարում: Դրա համար մայրս ասում էր՝ ոնց կարելի է Աստծո տվածից հրածար վել: Գիտե՞ք՝ որն է ամենասարսափելին. աբորտից անմիջապես հետո մասնակից բուժքույրը տալիս ասել է, որ երեխան տղա է եղել... Իսկ ես մորս երագին չհավատացի»: Ականջներիս չէի ուզում հավատալ, ուրեմն այսքանից հետո նրա համար ամենասարսափելին էլի սեռն էր...

Հ.Գ. Իսկ նրան, ինչպես սովորաբար, գորովանքով պահում էին աղ ջիկները, աղ ջիկներ, որոնցից, որպես անցանկալիներ, հրածար վում են մինչև լույս աշխարհ գալը: Արժի՞, որ շարունակի ապրել երեխան. վճռում է մայրը:



# Ոչինչ չի եղել,

ուղղակի  
մի Լիլիթիկ  
պակաս  
կծնվի  
Հայաստա-  
նում...

Լիա ԽՈԶՈՅԱՆ

“ 16



Երևանի հիվանդանոցներից մեկի գինեկոլոգիական բաժանմունքի միջանցք. մոխրագույն պատեր, հին ու քրքրված պատառներ, որոնք պատմում են մայր լինելու բերկրանքի մասին, բետոնե հատակ, անբարեհամբույր միջավայր ու բժիշկների կաբինետների դռները գրկած կանաչք: Նրանցից մեծ մասը հղիներ են, սակայն դեմքի արտահայտությունն այնպիսին է, կարծես իրենք էլ, սրտի տակ տաքուկ տեղավորված ապագա բալիկն էլ կատափնարան բարձրավալու են պատրաստվում...

«Գ... Մարինե, անցեք ներս»,- լսվում է գինեկոլոգի կաբինետից: Սիրունիկ բուժքույրը նույնիսկ չի էլ նայում հերթի մեջ կանգնած կանանց ու շտապում է ներս. ներսում շոկոլադն ու տաք սուրճն են, հեռուստացույցով էլ սիրելի սերիալի հերոսները հերթական հարցերն են պարզում: Իսկ Մարինեն, որ մինչ այդ գլխիկոր մտած էր, ձեռքը խլում է մոր ձեռքից ու, աչքերն այդպես էլ չբարձրացնելով, մտնում ներս: 5 րոպե, 10 րոպե, 15... հեղթում կանգնած կանանց համար ժամանակը շատ դանդաղ է անցնում, անգամ փնջոցներ են լսվում՝ «երբ պիտի դուրս գա, գնամ հասնեմ գործերիս», «էս ի՞նչ երկար մնաց» և այլն: Իսկ Մարինեի համար ներսում անցկացրած րոպեներն ընդամենը ակնթարթ էին:

«Հղիությունս պիտի ընդհատեմ, մարդս ա ասել: Մերոնք էլ ի՞նչ ի՞նչ կարան՝ ինչ էլ անեն: Պապաս ասեց՝ մտքիցդ կհանես, որ կարաս հետ գաս, քո երեսից հարևանությանս դեմը հո խայտառակ չե՞մ լինելու: Ես քեզ չեմ ընդունի. ինչ ասում ա, էն էլ կանես: Մամաս էլ իմ մման. ինչ ասել ա, էն էլ արել ա սաղ կլանքը...»,- նախքան այդ մոս յլ ու անբարեհամբույր բժշկա-

կան բաժանմունք հասնելը պատմում էր Մարինեն:

Բոլորովին վերջերս է ամուսնացել. 1,5 ամսվա հարս էր, երբ աստիճանները բարձրանալիս ուժեղ սրտխառնոց ու գլխապտույտ է զգացել, բայց տանը ամուսնու ու սկեսուրի ուրախությանը հանդիպելու փոխարեն նախազգուշացում է լսվել. «Մամ, մի հատ կիմանաս, երբ են «էխո» անում, անենք, որ աղջիկ եղավ, համի: Էս իմ մեղ մա-

ջալին մի հատին հագիվ յոլա տանեմ, բայց պտի տղա լինի»,- հայտարարել է ամուսինն ու դուրս եկել տնից: Սկեսուրն էլ փակվել սենյակում, սկսել է հեռախոսով բանակցություններ վարել սրա-նրա հետ, որպեսզի լավ գինեկոլոգ գտնեն, հետագայում էլ՝ էժան աբորտ անող:

Ու գտել են, ավելին՝ բժիշկն ասել էր, որ եթե ուզում են՝ Մարինեի համար անվնաս անցնի, ու



հետագայում էլ կարողանա երեխա ունենալ, կարող է դեղորայքային աբորտ անել, դա մոտ 60 հազար կար ծեցնա. 20-ն իրեն կտան կոնսուլտացիայի համար, 40-ն էլ կզնա իր գրած դեղերի վրա: Իսկ եթե չէ՝ 50 դոլարով էլ աբորտ անող կա, «բոլորն էլ չոր աշխատավար ձի պատճառով աբորտ չէ՝ արհեստական բեղմնավորում են սովորել անել»- հավաստիացրել էր «Ծանոթով» բժիշկը:

Բայց գինեկոլոգի կաթինետում, որտեղից դուրս եկավ Մարինեն, բացատրել էին, որ դեղորայքային աբորտ անելը վտանգավոր է և որևէ բժիշկ չի կարող դրան հավանություն տալ, անգամ, եթե հղին գրություն ստորագրի, որ տեղեկացված է եղել հետևանքների մասին: Այն սովորաբար անում են մինչև 6-շաբաթական ժամկետը, դրանից հետո չի կարելի, վտանգավոր է, և միակ ճանապարհը ավանդական աբորտն է:

«Մամ, վախենում եմ, ո՞նց թողնեմ՝ դանակով ինձ քերեն: Մամ, ա՛խր...»,- հեկեկում էր Մարինեն,

իսկ այն կանայք, որ մինչ կաթինետից դուրս գալը դժգոհում էին նրա ուշանալուց, փորձում էին հանգստացնել 19-ամյա «կիսամորը»: Մայրն էլ զերծ չմնաց. «Բալես, ես երկու աբորտ եմ արել, սաղ եմ...դե հիմա ի՞նչ անես: Ոչինչ, մի լացի, խի հո վերջինը չի՞... Էնքան դեռ կհղիանաս... լավ բժիշկ կգտնենք, անց կանի՝ բան չես էլ հասկանա»:

Որտեղից՞ իմանաք Մարինեն, որ իր տառապանքներին զուգահեռ միջազգային կառույցներում, Հայաստանից հեռու ու մուկիսկ դուլզն-ինչ Հայաստանի տեղը չի մացող պաշտոնյաները մտահոգված քննարկում էին, որ սելեկտիվ աբորտների թիվն անհանգստացնող չափերի է հասնում մուկ Հայաստանում, Ալբանիայում և այլուր: Եվ որ նրանք միջոցներ են փնտրում, որպեսզի կանխեն այդ արատավոր երևույթը, այլապես, եթե այսօր ամեն 100 աղջկա դիմաց ծնվում է 115 տղա, 20 տարի անց սեռի րի այդ տարբերությունը հասարակությունում իր բացասական ազդեցությունը կունենա:



Բայց... Մեկ շաբաթ անց Մարիանն դարձյալ մտավ գինեկոլոգիական բաժանմունք, սակայն այս անգամ մնաց այդ մտայն պատերում մեկ ամբողջ օր: Չծնված աղջնակին, ում 7.5 ամիս անց որոշել էր Լիլիթ անվանել, թողեց հիվանդանոցում. հաջորդ օրը՝ առա վտոյան 9.30-ին, ամուսինը նրան դիմավորեց հիվանդանոցի դռների մոտ, ձեռքից վերցրեց փոխանորդ հագուստով տուպրակը, դրեց այն մեքենայի բեռնախցում ու, ճանապարհին գրեթե բառ չփոխանակելով ու Մարիանին տուն հասցնելով, շտապեց աշխատանքի: Սկեսուրը սիրած սերիալի կրկնությունն էր նայում ու անդարդ սուրճ ըմպում... ոչինչ չի եղել, ոչինչ էլ չի փոխվել:

Պարզապես Հայաստանում մեկ Լիլիթիկ պակաս մանկապարտեզ հաճախող կլինի, ապագայում մեկ Լիլիթ «հնազանդ եմ» Աստծո առաջ էլ չի ասի, իսկ խոր ծերությունում էլ գուլպա չի գործի թոռնուհիս: Ոչինչ չի եղել, ոչինչ էլ չի փոխվել...

2000-2010թթ-ին, ըստ պաշտոնական վիճակագրության, Հայաստանում նվազել է մինչև 20 տարեկանների տարիքային խմբում մայրանալու ցուցանիշը. եթե 10 տարի առաջ ծնունդնե-

րի ընդհանուր թվի մեջ 5 հազարը կամ 20 տոկոսից ավելին կազմում էին մինչև 20 տարեկան մայրերը, ապա 2010 թ. տվյալներով՝ 44825 ծնունդների մեջ ընդամենը 3900-ն է մայրացել այդ երիտասարդ տարիքում... Իսկ այդ թվից 8577-ը չի ծնվել. հավանաբար Մարիանի մահն ճակատագրեր են ունեցել նրանց մայրերը ու ստիպված են եղել դիմել հղիության արհեստական ընդհատման մեթոդին:

Մինչդեռ բոլորս էլ հասկանում ենք, որ այս թիվն իրականում շատ ավելի մեծ է, քանզի ոչ բոլոր կանայք են հղիությունն ընդհատում այնպիսի հաստատություններում, որոնք հաշվետու են առողջապահության նախարարության առջև: Ծատերը դա արել ու, որքան էլ ցավալի է, շարունակում են անել ուղղակի տանը՝ գործելու շյուղի, տաք վաննայի, որովայնին ուժեղ հարվածի կամ այլ կյանքին ու առողջությանը սպառնացող միջոցների կիրառմամբ:

Ու, վստահաբար, այդպես էլ լինելու է այսուհետ, քանի որ այդպես էլ եղել է 5, 10, 30 տարի առաջ. որքան էլ ձգտեն համապատասխան պաշտոնյաները ու միջազգային կառույցները արգելել «էխո»-ով

սեռի հայտնումը ծնողներին կամ ընդհանրապես արքրոսները, մեկ է, հայը ելք կգտնի ու բժշկի գրպանը 5-հազարանոց դնելով՝ ապագա երեխայի սեռը կհամաճա: Դե, իսկ մնացածը, ինչպես ասում են ռուսները, дело техники:



Հրատարակվել է 2012 թ. մայիսի 19-ին Panorama.am կայքում



“ 20

Միսալ,  
որի անունն է ՄԱՐԴ

Դանակը դիպավ փոքրիկի ոտիկներին, մայրը տնքաց՝ չե՛մ ուզում... փոքրիկի ողջ մարմինը արքուսաց, ու նա բնագոյաբար մետվեց վեր՝ դեպի արգանդի խորքը... սառը զենքն ընկավ բժշկի ձեռքից, մարմինը արքուսաց այնպես, ինչպես փոքրիկի մարմինը, սակայն բժիշկը փախուստի ու թաքնվելու տեղ չուներ, ու նրա սիրտը դող ընկավ... փորձեց հավաքել ուժերը, ստացվեց. ձեռքին հայտնվեց մեկ այլ զենք՝ ավելի սառը, ավելի կոպիտ... Ու այդ զենքով բժիշկը պետք է դադարեցներ դեռ չծնված մանկան կյանքը:


Մեկ տարի չէր անցել այն օրից, երբ նույն կնոջը՝ Արուսյակին, սկեսուրը ստիպելով բերել էր բժշկի մոտ, որպեսզի սր հետաական վիժումով կանխեր հղիությունը.

- Վեցերորդ երեխան է, բժիշկ ջան, խիղճ ունեցեք,- աղերսել էր սկեսուրը, և բժիշկը ջանասիրաբար ու որդիաբար բացատրել էր տիկնոջը, որ սր հետաական վիժման համար չափազանց ուշ է:

- Ի՞նչ եք ասում, երեխան շուտով կծնվի,- պատասխանել էր բժիշկ-գինեկոլոգը, ու արմ վազն երկու շաբաթ անց ծնվել էր Արուսյակի ու Մերուժի վեցերորդ երեխան:

Նախքան վեցերորդ երեխայի ծնունդը սկեսուրը տղայի ու հարսի անկողինն արտաձնացրել էր, բայց դե սեռական հարաբերության համար մեկ այլ տեղ էր գտնվել, որն էլ չէր մնացել անհետևանք... ու փոքրիկն այսօր վայելում է իր մանկությունը... բայց նրա բախտին չարժանացավ նրա կրտսեր քույրը, ով անողոքաբար հայտնվել էր բժշկի ձեռքի տակ ու պայքարում էր կյանքի համար...

Յոթամսյա մանկան փոքրիկ ու հարազատ տունը լցվում էր արյամբ... նա փորձում էր խոսել մոր հետ, համոզել նրան, հար-



վածում էր ոտքերով, ձեռքերով, գլխով... աղերսում էր կյանք, կյանք, որի մասին ինքն արդեն որոշակի գաղափար ուներ, ինքն արդեն իր անգիտակից գիտակցության մեջ պատկերել ու նկարագրար դել էր այդ կյանքը...

Բժիշկը նայեց փոքրիկ ոտիկին ու... նրա թուքը չորացավ կոկորդում, արյունը երակներում սառեց, դեմքը պատվեց քրտինքով ու զգաց փոքրիկի՝ պայքարի անմահանջ տատանումները...

- Երեխա՛ս,- տնքաց մայրն ու սկսեց անհանգիստ շարժումներ անել,- երեխա՛ս...

Իսկ փոքրիկն, ով արդեն 28 շաբաթական էր և ապրելու համար ուներ լիսր ժեք կազմվածք և իրավունքներ, մի անհույս ճիգով ձգվեց բժշկի ձեռքերի վրա ու արտաբերեց իր կյանքի առաջին ու վերջին ճիշդ:

Մանկան ձայնից սպանդարանում մի ակնթաթ թ լույսը տիրեց, ու ամեն մեկն իրեն դաժիճ զգաց:

Մայրը հազիվ ձգվեց տեղից ու նայեց թասի մեջ ընկած մանկանը, նրա աչքերը լցվեցին արցունքով,

ու նա սկսեց գազանի պես ոռնալ: Բժիշկը հանեց ձեռնոցներն ու նույն շարժումով, ինչպես մի քանի վայրկյան առաջ, մանկիկին նետեց ալ բամբակի մեջ...

Բացեց դուռն ու նետվեց իր սենյակ: Մաքուր օդը սթափեցրեց: Դուռը թակեցին, փորձեց հավաքել մտքերը, փորձեց տիրապետել մարմնին... Չստացվեց, մանկան արձակած ճիշդ դեռ ականջների մեջ էր: Դուռն թակոցին չէր կարողանում արձագանքել, ուժ չէր գտնում ձայն հանելու, ոտքերը թուլացել էին, հազիվ ընկել էր բազմոցին...

- Ուզում եմ ներս գալ,- տեղեկացրեց սպիտակ խալաթով մեկը, ով նույնպես ներկա էր մանկան սպանդի ողջ գործընթացին:

- Ասա, թող մի քիչ սպասեն,- հազիվ արտաբերեց բժիշկը,- ես կկանչեմ:

Կնոջ դուրս գնալուց հետո փոխեց բժշկական հագուստը, դեմքը ցալեց սառը ջրով, մի քանի բոլակ ստիպեց իրեն մոտ նա կատարվածն ու ներս կանչեց դուռն մյուս կողմում անհամբեր սպասողներին:

Չձնված մանկան հարազատները՝ հայրը, տատն ու հորաքույրը, ներս մտան գրեթե ժպտալով. ստացվել էր՝ երեխան չէր ծնվելու, նա արդեն չկար: Անչափ շնորհակալ լինելով «գթասիրտ» բժշկից՝ գումարը դրեցին սեղանին ու դուրս եկան... Բժիշկը ցանկացավ խոսել կատարվածի մասին ու կրկին հիշեցնել, որ չհղիանալու համար գոյություն ունեն տարբեր մեթոդներ, իսկ արհեստական վիժեցման համար կա սահմանված ժամկետ, բայց ոչինչ չասաց, քանի որ այդ մարդկանց արդեն տասնյակ անգամ հանդիպել էր ու նույն բանն ասել էր արդեն հազար անգամ:

Հարազատները դուրս եկան ու դուռը փակեցին այնպես անաղ մուկ, ինչպես բոլակներ առաջ բժշկի օգնությամբ կյանքի դուռը փակեցին մանկան առաջ...

Բժիշկը սառը հայացքով նայեց գումարի կողմը. դա իր կյանքի այն նողկալի վարձատրությունն էր, որ նա ստացավ այլոց չարդարացված սխալը դաժանաբար շտկելու համար...

Սխալ, որի անունն է ՄԱՐԴ:





Հրատարակվել է 2012 թ. հունվարին Ֆեդինսկի բլոգում

Տնային պայմաններում  
հիիության արհեստա-  
կան ընդհատումը  
վտանգավոր միտում է  
հայ կանանց շարքում



ՀՀ պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 2009-ին Հայաստանում գրանցվել է 10 149 աբորտ

Հայաստանի ազգային անվտանգության համաձայն՝ ծնելիության ցածր մակարդակը Հայաստանի ազգային անվտանգության սպառնալիքներից է: 2003-ին ՀՀ կառավարությունը որոշում է ընդունել 2003-2015 թթ. Մոր և մանկան առողջության պահպանության ու զմայարության հաստատման մասին, որում, մասնավորապես, ասվում է. «Մայրական և վերարտադրողական առողջության բարելավմանն ուղղված ծրագրերի մեջ մտնում է աբորտների դեմ պայքարը, այդ թվում՝ արհեստական վիժումների կանխումը, ժամանակակից հակաբեղմնավորիչ միջոցների խրախուսումը, առողջ սեռ կան կյանքի քարոզչությունը»: Ռազմավարության նպատակներից է՝ մինչև 2015-ը նվազեցնել արհեստական վիժումների մակարդակը մինչև 30 %:

PanARMENIAN.Net - Չնայած 1990-ականների կեսերին ծնունդների թվի համեմատ աբորտների թվի զգալի նվազմանը՝ աբորտների մակարդակը նախկին ԽՍՀՄ երկրներում մնում է աշխարհում ամենաբարձրերից մեկը: Հայաստանում աբորտները թույլատրված են կնոջ «ցանկությամբ» հղիության վաղ շրջանում: ՄԱԿ-ի տվյալների համաձայն՝ 2004-ին Հայաստանը գտնվել է 27-րդ տեղում աբորտների քանակությամբ (1 000 կնոջ համար՝ 13,9 աբորտ): ՀՀ պաշտոնական վիճակագրության համաձայն, 2009-ին հանրապետությունում արձանագրվել է 10 149 աբորտ: Ինչպես երևում է վիճակագրությունից, 1983-ի համեմատ 2000-ին աբորտների քանակը կրճատվել է երկու անգամ (1983 թ.՝ 33 158 աբորտ, 2000 թ.՝ 11 769):

Սակայն այսօր իրական պատկերը հեռու է վերոհիշյալ թվերից: Ծատ բարդ է անվանել Հայաստանում աբորտների ստույգ թիվը, եթե չասել՝ անհնար է: Ինչպես նշում են մասնագետները, խնդիրն այն է, որ հաշվառված չեն հաշվառված աբորտները: Դժվար է ասել, թե նման դեպքերը Հայաստանում

որքան են, բայց մասնագետները նշում են, որ տնային պայմաններում աբորտը վտանգավոր միտում է դառնում հաշվառված շարքում:

Ինչպես նշել է PanARMENIAN.Net-ի թղթակցի հետ զրույցում բժիշկ-գինեկոլոգ Լուսինե Տիտիյանը, աբորտը կանանց համար

միշտ անցանկալի գործընթաց է և աբորտի բացասական հետևանքները լիովին բացառելն անհնար է: «Անվտանգ աբորտ գոյություն չունի, և բժշկի խնդիրն է նվազագույնի հասցնել աբորտի բացասական հետևանքները: Հենց այդ պատճառով կանայք պետք է անպայ-



ման դիմեն բժշկի ինքնուրույն ինչ-որ միջոցի դիմելուց առաջ»,- ասել է բժիշկ-գինեկոլոգը: Մասնագետի խոսքերով՝ հայ կանանց շարքում սկսել է նկատվել տնային պայմաններում առանց բժշկի հետ խորհրդակցելու դեղորայքային աբորտի կիրառման վտանգավոր միտում: Ինչպես նշել է Լուսինե Տիտիրյանը, իհարկե, աբորտի այդ տեսակը պակաս վտանգավոր է, քան գործիքայինը, սակայն այդ մեթոդին կարելի է դիմել միայն բժշկի երաշխավորագրով: «Այսօր դեղատներում վաճառվում են դեղեր, որոնց օգնությամբ կարելի է ընդհատել հղիությունը, ինչը, սակայն, կարող է հանգեցնել անցանկալի և շատ վտանգավոր հետևանքների: Այդ դեղերը կարելի է օգտագործել միայն բժշկի դեղատոմսով»,- ասել է նա: Մասնագետին նաև անհանգստացնում է այն, որ վերջին տարիներին նկատվում է աբորտների աճ և առաջին հղիության ընդհատում դեռևս հասկանալի շարքում: Նա դա բացատրում






Է առաջին հերթին դպրոցում և ընտանիքում սեռա կան կյանքի ճիշտ դաստիարակության բացակայությամբ:

Սակայն դեռս հաս կանանց շարքում արթորտների պաշտոնական վիճակագրություն, ցավոք, չկա: Ինչպես նշել է մեզ հետ գրույցում Երևանի հիվանդանոցներից մեկի գինեկոլոգիական բաժանմունքի մասիկին աշխատողը, գրեթե անհնար է որոշել 15-20 տ կանանց շարքում հղիության ընդհատման ստույգ թիվը, քանի որ այդ արթորտները հաճախ պարզապես չեն գրանցվում: Ելնելով վերը նշվածից՝ մասնագետը խորհուրդ է տալիս անպայման դիմել բժշկի այն դեպքում, եթե կինը մտադիր է ընդհատել իր համար անցանկալի հղիությունը:

Ցավոք, Հայաստանում առ ղշության պահպանման և վերականգնման մշակույթը հեռու է բավարար լինելուց: Սակայն հայ կանայք պետք է ծանոթանան ՀՀ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքին մախքան հարազատների կամ ընկերուհիների խորհրդով տանն արթորտ կատարելը: Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ կետն ասում է՝ հղիության արհեստական ընդհատումից առաջ և հետո առողջապահական հաստատությունը կնոջը տրամադրում է անվճար բժշկասոցիալական խորհրդատվություն անցանկալի հղիությունից պաշտպանվելու միջոցների ընտրության վերաբերյալ:

# Ռադարեցված կյանքի պատմություններ.

սեռով պայմանավորված  
աբորտները՝  
մտահոգության տեղիք



«**Ռ**ուստրու երկու տարեկան էր, երբ իմացա՝ մորից հղի եմ: Գնացիմք բժշկի, պարզվեց կրկին աղջիկ է, և ամուսինս ասաց, որ երկու աղջիկը մեր ընտանիքում շատ կլինի: Որոշեցիմք արթս անել: Ընտանիքում որևէ բարձրաձայն խոսակցություն չի եղել այդ մասին, սակայն արթսից հետո հենց վերադարձա տուն, դուստրու հայտարարեց, որ մեզ չի սիրում, քացով խփում էր փոքիս ու ասում, որ ես լավ մամա չեմ»,- հիշում է 25-ամյա Կարինե Նահապետյանը:

Չկարողանալով հասկանալ իրենց փոքրիկ դստերը՝ Նահապետյանները դիմել էին հոգեբանի օգնությանը:

«Մի քանի ամսից Լիլիթն ինքը սկսեց մեզ հետ խոսել, իր թղռ լեզվով ասաց՝ պապա, ես գիտեմ, որ դու ու մաման քույրիկիս սպանել եք, սակայն զարմանալի է՝ որտեղից իմացավ, մենք ոչինչ չենք խոսել տանն այդ մասին»,- ասում է ընտանիքի հայրը՝ 32-ամյա Սուրեն Նահապետյանը:

«Իհարկե, ցավում եմ, որ այսպես ստացվեց, որ աղջիկս գուցե երբեք էլ չսիրի ինձ, բայց ինձ էլ պետք է հասկանալ, ես ի վիճակի եմ միայն երկու երեխա պահել, իսկ եթե երկուսն էլ աղջիկ լինեն, պետք է ստիպված երրորդն էլ ունենանք՝ տղա: Գիտեմ, տուժողը կինս է, արթսի դրողն էլ՝ ես, բայց հայ օջախը կիսատ է, կայացած չէ, եթե տղա շարունակող չկա այդ օջախում»,- հավելում է Նահապետյանը:

Հայաստանում հղիության արհեստական ընդհատումն արգելված չէ, «Մարդու վերարտադրական առողջության և վերարտադրական իրավունքների մասին» օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր կին ունի հղիության արհեստական ընդհատման իրավունք», բայց ոչ ուշ, քան մինչև հղիության 12-րդ շաբաթը:



Առողջապահության մախարարության Մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ, գլխավոր մանկաբարձ-գինեկոլոգ Գայանե Ավագյանն ասում է, որ եթե հղիության արհեստական ընդհատումը ճիշտ է կատարվում, վտանգավոր չէ, սակայն ամենաչնչին իսկ սխալը կարող է ճակատագրական լինել կնոջ համար, անգամ հանգեցնել չբերության:

«Բազմաթիվ արբորտներ անելիս ես հստակ մկատել եմ, երեխա ունենալ - չունենալու որոշումը տղամարդուն է պատկանում», - ասում է Ավագյանը:


ՀՀ վիճակագրական վարչության տվյալներով՝ 2010-ին Հայաստանում գրանցվել է հղիության արհեստական ընդհատման 8577 դեպք՝ 44 825 ծնունդների դիմաց, այսինքն՝ չի ծնվել բեղմնավորված պտուղների 16 %-ը:

Հղիության արհեստական ընդհատման դիմում են հիմնականում 25-29 տարեկան կանայք, ովքեր ունեն երկու, հազվադեպ երեք երեխա:

2010 թ.-ին 2009-ի համեմատ արբորտների թվի ավելի քան 16 %-ով նվազումը (2009-ին գրանցվել է 10 114 արբորտ) Ավագյանը պայմանավորում է ժամանակակից հակաբեղմնավորիչների օգտագործման տոկոսի ավելացմամբ, հանրության սեռական իրազեկվածության բարձրացմամբ:

Միևնույն ժամանակ գինեկոլոգը նշում է, որ արբորտից առաջ խոսում են կնոջ հետ, փորձում նրան հետ պահել, սակայն ոչինչ անել չեն կարող, երբ ընտանիքն արդեն որոշել է հրաժարվել անցանկալի երեխայից:

Ավագյանի տվյալներով՝ այժմ տնային պայմաններում կանայք փորձում են դեղորայքներով պատճառ դառնալ հղիության դադարեցմանը, ինչը խորհուրդ չի տրվում:





«Շատ են դեպքերը, երբ կինը սխալ դեղաչափով է օգտագործում դեղորայքը և հետագայում բազմաթիվ խնդիրներ է ունենում՝ արյունահոսություն, կտորներ են մնում սր գանդում, երբեմն էլ վիժումը կեղծ է լինում, և հղիությունը շարունակվում է: Ուստի խորհուրդ է տրվում գոնե ճիշտ դեղաչափ ստանալու համար դիմել բժշկի»:

«Կանանց ուեսուրս» կենտրոնի սեռա կան և վերսր տող րողական առ դջության հարցերի պատասխանատու Անուշ Պողոսյանն ասում է, որ հայ տղամարդիկ մշտապես կանանց աբորտի են դրդում սեռ վ պայմանավորված, որը կնոջ իրավունքների խախտում է. «Քեզ ընդհատում են նրա համար, որ դու աղջիկ պիտի ծնվես: Տղամարդիկ բնության դեմ են գնում, կանանց և տղամարդկանց հավասարությունն է խախտվում, միշտ քաջալերվում է, որ տղա է ծնվում, սակայն մարդիկ մոռա նում են, որ եթե խախտ-

վում է բալանը, հետո կին չի լինի, որ տղա ծննդաբերի, և Հայաստանն արդեն իսկ նման երկրների ցանկում է»:

Եվրոպայի խորհուրդը ևս անհանգստացած է Հայաստանում իգական սեռի պտուղների սր որտների թվով: Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովը հոկտեմբերի 3-7-ը կալանալիք լիագումար միստում քվեարկության է դնելու խնդրի վերաբերյալ մշակվող բանաձևի նախագիծը:

Ըստ ԵՄԽՎ հավասար հնարավորությունների հանձնաժողովի՝ Հայաստանում սեռի ընտրությունը մինչև ծննդաբերությունը հասել է «անհանգստացնող չափերի»՝ 112 տղայի դիմաց ընդամենը 100 աղջիկ է ծնվում:

Ծվեյցարիան ներկայացնող Դորիս Ստամպի հաշվետվության հիման վրա մշակվող բանաձևով հանձնաժողովը կոչ է անում «հետսք ննել ծնելիության







սեռական համամասնության թեքվող կորի հիմքերն ու պատճառներն» ու ավելացնել ջանքերը «հասարակությունում կնոջ դերն ամրապնդելու համար»:

Ըստ մշակվող բանաձևի՝ Հայաստանի կառավարությունը պետք է արժանահավատ տվյալներ հավաքի ծնելիության սեռական համամասնության վերաբերյալ երկրի ողջ տարածքից, ինչպես նաև վերապատրաստի բուժանձնակազմը

սեռի ընտրության նախաձեռնության գործընթացների վերաբերյալ :

Եթե բանաձևի նախագիծը հաստատվի, ԵՆ անդամ բոլոր երկրները պետք է խորհուրդ տան հիվանդանոցներին «չտրամադրել պտղի սեռի վերաբերյալ ինֆորմացիան» մինչև որոշակի ժամանակահատված:

«Առաջժմ հայտնի չէ, թե դա ինչպես է տեղի ունենում, և ինչ պա-

տասխանատվություն են կրում ծնողներին ապագա երեխայի սեռը հայտնող բժիշկները,- այցից հետո «Մեդիալաբին» ասել է Ստամպը՝ հավելելով, - հարկ է լրացուցիչ ուսումնասիրել այս հարցը: Զեկույցը, որում կխոսվի ԵՆՍՎ, անդամ երկրների՝ ընտանիքի պլանավորման ժամանակ այս միտումը հաղթահարելուն ուղղված ջանքերի անհրաժեշտության մասին, ԵՆՍՎ





քննարկմանը կներկայացվի հոկտեմբերին»:

ՀՀ առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչության պետ Կարինե Սարիբեկյանն ասում է, որ դեռևս ուսումնասիրություններ են կատարվում՝ պարզելու ընտրովի աբորտների պատճառները, և թե ինչու ընտանիքներին չի բավարարում իգական սեռը.

«Թեև դա մարդկային է, հասկանալի է, որ ցանկացած ընտանիք երկու սեռի երեխա է ցանկանում, սակայն սեռով պայմանավորված աբորտը բոլոր դեպքերում ճիշտ չէ, և եթե ընտանիքը պատրաստ չէ երեխա ունենալ ու, թող չպլանավորի հղիություն»:

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը ներկայումս հետազոտություն է իրականացնում Հայաստանում ըստ սեռի աբորտների վերաբերյալ, որն այժմ դաշտային փուլում է, ու տվյալները դեռ չեն հրապարակվում:

Հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետյանն ասում է, որ նշված բանաձևը շատ կարևոր դեր ունի հասարակական և սոցիալական հարթությունում, այն փորձ է՝ վերացնելու կամ գոնե պակասեցնելու գենդերային անհավասարությունը հենց նրա ծննդյան պահից:

«Ինչպես ցույց է տալիս Չինաստանի և Հնդկաստանի փորձը, ընտրովի աբորտները բերում են սեռի քանակական շեղման, ինչն իր հերթին բերում է սոցիալական լուրջ խնդիրների, այս պատճառներով բանաձևը և նրան հետևող գործողությունները շատ կարևոր են մեր հասարակության հետագա հավասարակշռվածությունը և բարեկեցությունը պահպանելու համար», - նշում է Հայրապետյանը:

Սակայն բանաձևը ընդունելու պարագայում նա նաև կոռուպցիոն և ազգային մտածելակերպի փոփոխության անհրաժեշտության ռիսկեր է տեսնում.

«Իմ կարծիքով, անմիջապես ընդունել հրահանգը, որ կարգելի պտղի սեռի բացահայտումը, ճիշտ լուծում չի լինի գոնե Հայաստանի համար: Ավելի քան համոզված եմ, որ այն կբերի կոռուպցիայի ավելացման: Այսինքն՝ այդ ինֆորմացիան ավելի թանկ կարժենա: Մինչ այդ հրահանգն ընդունելը կամ ընդունելու հետ համատեղ մեր հետազոտության արդյունքները վերլուծելուց հետո պետք է աշխատանք կատարենք ինչպես բժիշկների, այնպես էլ հասարակության հետ»:

ՄԱԿ-ի Բնակչության հայաստանյան հիմնադրամն այս համատեքստում բժիշկներին առաջարկում է սեռի ինֆորմացիան բացահայտելու երկարաժամկետ ռիսկեր, իսկ ազգային բնակչությանը կոչ է անում աղջիկ երեխայի, և ընդհանրապես կնոջ դերի և նրա արժեքի բարձրացման վերաբերյալ հասարակական կարծիքը վերանայել:

Marianna  
GRIGORYAN

# Armenia: Are Selective Abortions Behind Birth Ratio Imbalance?

“ 36



Armenia's high rate of male births is alarming international and Armenian prenatal specialists. Their chief concern is that selective abortions are contributing to a demographically undesirable gender imbalance.

Government statistics indicate that a gender imbalance in births has existed since the early 1990s, but the trend has become more visible in recent years. The State Statistical Service of Armenia reports that 23,800 boys and 20,900 girls were born in 2010, working out to a rate of about 114 male births for every 100 female births. In 2009, 23,600 boys and 20,700 girls were born, marking approximately the same birth ratio as in 2010.

The United Nations Population Fund (UNFPA) puts the worldwide sex ratio at birth at 105-106 males per 100 females. Armenia has an overall population of 2.96 million.

Assessing the birth ratio, the head of the State Statistical Service's Census and Demography Department warned that Armenia faces "a serious problem."

"A study must be conducted to find out whether this imbalance is the consequence of selective abortions, or something else," said Karine Kuyumjian. "[T]he problem is obvious, and it will become even plainer later, when, along with demographic issues, we will face a lack of future mothers."

Representatives from the Parliamentary Assembly of the Council of Europe (PACE) recently reached a similar conclusion. Armenia's above-average rate of male births indicates "that there must be some sort of pre-natal sex selection," said Doris Stump, a PACE rapporteur on pre-natal sex selection who travelled to Yerevan in June to assess the problem.

"But there is no knowledge yet about how it is done and what is the responsibility of doctors telling the sex of the child to the parents," Stump said. "More research has to be done on that question." A report about the need for member-countries "to fight against the preference for boys" in family planning will be presented to PACE in October, she added.

As elsewhere in the Caucasus (Georgia and Azerbaijan also post high rates of male births, PACE reports), much of the problem may have to do with a heavy cultural emphasis on the value of having sons.

"A good man must have a son," said sociologist Aharon Adibekian, commenting on Armenian attitudes toward their children's gender. "If you don't have a son, who will

inherit your belongings, your house and [look after] your family?"

That perspective is on display at Armenian hospitals; at one Yerevan facility recently, the overjoyed father of a newborn baby boy danced to Armenian folk music, while medical staff consoled the mother of a newborn baby girl that she'd "have a boy next time."

Sociologist Adibekian, however, scoffs at the notion that this



preference would prompt women to abort female fetuses. “In countries at war, the number of boys is high; this is called a war phenomenon,” he asserted, referring to a spike in male births noted by demographers in countries engaged in long-term combat, where 120 boys can be born for every 100 girls. The same might be happening amid Armenia’s ongoing standoff with Azerbaijan, Adibekian suggested.

Dr. David Mkhitarian the medical director of Yerevan’s prominent Shengavit Medical Center, also dismisses as “nonsense” the claim that female fetuses are being aborted selectively. “It’s just that more boys than girls are born,” Dr. Mkhitarian said.

Armenia’s current population slightly favors women (51.5 percent) over men (48.5 percent), a difference that could reflect labor migration trends. The UNFPA’s deputy representative to Armenia cautions that legitimate grounds exist for connecting Armenia’s high male

birth rate to “intentional actions.” The UNFPA expects to finalize a report on the issue this November.

“[S]ince the findings of the study are yet unknown, maybe it’s too early to speak about it with certainty, but if we try to consider it logically, we will see it is very likely to be so,” said Garik Hayrapetian.

“The birth rate has decreased about twice now as compared to the 1980s, and by reducing the number of baby girls we risk entering a vicious circle,” Hayrapetian continued. “When we say we need soldiers to provide for Armenia’s security, we should not forget that we need enough ... mothers to whom these soldiers will be born in the future.”

But for women like 27-year-old Yerevan homemaker Gayane Hovhannisian, her husband and her family’s “honor” outweigh any concern about Armenia’s demographic situation.

A mother of two daughters, Hovhannisian says that she did not hesitate to opt for an abortion when

she learned she was pregnant with a third girl. Six months later, she got pregnant again; this time, with boy-girl twins. To avoid having another girl, she chose another abortion.

“After these abortions, I finally fulfilled my husband’s dream, and our son was born,” Hovhannisian said. “I would burn with shame if I failed to give birth to a son.”

Official statistics show that the number of abortions in Armenia (13,797 cases) increased by roughly 10 percent in 2010 compared with the previous year; some specialists, though, maintain that the actual figures are higher.

A fetus’ gender cannot be determined until the 14th week of pregnancy, but Armenian law only allows abortions through the 12th week of pregnancy for women without contraindications.

That suggests that many abortions “are performed secretly and illegally,” said Marine Margarian, a project coordinator on gender rights issues at the Public Information





and the Need for Knowledge non-governmental organization. “Of course, an abortion performed after the 12th week of pregnancy is not registered officially; otherwise, the picture would be clearer.”

Dr. Mkhitarian cautions that warnings about gender-based abortions will do nothing to stop the use of abortions for “family planning.”

“[I]f ... a woman of about 40 has three daughters and she learns she is expecting a fourth girl, she will go for an abortion despite any recommendations by either PACE or the Republic of Armenia or whoever it may be,” said Mkhitarian.







Լուսանկարները՝  
Նարեկ ԲԱՆՏԱՄՅԱՆի




Գրքում ներառվել են հետևյալ հեղինակների հոդվածները.

- Նարէ ԱԹՈՅԱՆ, **«Սխալ որի անունն է ՄԱՐԴ»**
- Մարիաննա ԳՐԻԳՈՐՅԱՆ, **«Are Selective Abortions Behind Birth Ratio Imbalance?»**
- Գրիգոր ԷՄԻՆ-ՏԵՐՅԱՆ, **«Տղամարդու տեսակետ. «Հնազանդ եմ», «Տեր եմ»**
- Լիա ԽՈՋՈՅԱՆ, **«Ոչինչ չի եղել, ուղղակի մի Լիլիթիկով պակաս կծմվի Հայաստանում...»**
- Փառանձեմ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, **«Դադարեցված կյանքի պատմություններ. սեռով պայմանավորված արքրտները՝ մտահոգության տեղիք»**
- Լենա ՀՈՎՍԵՓՅԱՆ, **«Երեխան ապրի, թե ոչ՝ որոշում է մայրը»**
- Մանե ՊԱՊՅԱՆ, **«Արդեն երկու աղջիկ ուներ, և երրորդն անհրաժեշտ չէր...»**
- Եկատերինա ՊՈՂՈՍՅԱՆ, **«Տնային պայմաններում հղիության արհեստական ընդհատումը վտանգավոր միտում է հայ կանանց շարքում»**
- Գայանե ՍԱՐԳՍՅԱՆ, **«Մայրանալու իրավունքը տրվել է արարելու, ոչ թե սպանելու համար...»**



Գրքում արտահայտված  
կարծիքները հեղինակային են  
և կարող են չհամընկնել ՄԱԿ-ի  
Բնակչության հիմնադրամի  
տեսակետին:

© ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ,  
Հայաստան, 2012

A black and white photograph of an elderly woman with white hair, wearing a patterned dress, standing in a doorway. She is looking towards the camera. The lighting is dramatic, with the woman silhouetted against the light coming from the doorway behind her.

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ  
Պ. Ադամյանի փող. 14, 0010, Երևան, Հայաստան,  
հեռ.՝ (37410) 543417, 547087, 543416, ֆաքս՝ (37410) 543811,  
[www.unfpa.am](http://www.unfpa.am)